


եւ որոց երբ կամ ինչ կերպով դադրելիքը Աստուծոյ միայն է յայանի :

Ո՛րքան փափաքելի է մեզ եւ ձեզ առհասարակ որ մեր գեղապայծառ նախիջեւանի բարեպաշտ ժողովուրդը ազատ մնայ կամ շուտով ազատի այս աստուածասատ բարկութեան հարուածէն՝ որ մեր ազգին վրայ ծանրացած է ամէն տեղ. բայց մեր ձեռքէն ինչ կուգայ՝ եթէ ոչ մեր կողմանէ հոգւով չափ աշխատիլ որ ատելութիւնը եւ խռովութիւնը հեռանայ շուտով մեր ժողովրդեան մէջէն, եւ սէրն ու խաղաղութիւնը հաստատուի եւ արմատանայ. մէկ կողմանէ ալ խնդրել յԱստուծոյ որ հաշտ աչօք նայի ամենուս վրայ՝ իբրեւ իւր սիրելի որդւոց, իբրեւ որդւոց բազմաչարչար նահատակին իւրոյ Գրիգորի, — որոյ բարեխօսութեանն ընծայուած այս սուրբ եկեղեցիս՝ այսքան գեղեցկութեամբ պայծառացուցիք նորերս, — եւ տայ մեզի այն քրիստոնէավայել սուրբ սիրոյ կրակը՝ որով կայրի կտոչորի ամէն տեսակ փուշ եւ խռիւ հակառակութեան,

թշնամութեան, ատելութեան, երկպառակութեան, եւ կհալի ամենայն սառնութիւն եւ պաղութիւն, կլուսաւորուի ամենայն միտք, կփառաւորուի ամենայն սիրտ, եւ կպայծառանայ ամենայն քաղաք եւ ամենայն ժողովուրդ :

Այս բարեմաղթութեան հետ կծանուցանեմ Քրիստոսասէր ժողովրդեանդ մերում եւ զայս՝ որ թէպէտ առ այժմ՝ ձեր օգտին համար յանձն առած աշխատութիւններս կփութացընեն զիս իմ տեղս դառնալու, բայց յոյս ունիմ Աստուծով որ կարճ ժամանակէն դարձեալ ձեր մէջ գտնուիմ եւ շաբաթներով մնամ նախիջեւան :

Նա՛ որ խոստացած է իւր սիրելի հաւատացելոցը հետ լինել միշտ մինչեւ իկատարած աշխարհի՝ աճեցընէ ձեր հաւատքը, ամրացընէ ձեր յոյսը եւ վառէ բորբոքէ ձեր մէջ աստուածսիրութիւնն ու եղբայրսիրութիւնը, որով ծաղկիք եւ պայծառանաք օր ըստ օրէ իփառս Աստուծոյ եւ իպարծանս Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ :



ԽԱԼԻՊԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Ա.Ղ.Գ.Ի.Ս. Հ.Ա.Յ.Ո.Յ.

ԻՍԿԶԻՍՆ 1864 ՏԱՐԻՈՅՍ.

Խալիպեան ազգային Ուսումնարանին վրայ հարկ կհամարիմք տարին մեկ երկու անգամ այլ եւ այլ տեղեկութիւններ տալ ընթերցողաց, մանաւանդ տարեգլուխներուն ու տարեկան հարցաքննութիւններէն ետեւ, յուսալով քե բարեսիրաց զովելի հետաքրքրութեանը ակտրժական են այսպիսի լուրերը :

Աշակերտաց բիւր՝ տարւոյս սկիզբներն է 141 : — Նախակրթարանի աշակերտներն են 15, առաջին Գասարանիները 23, երկրորդին 26, երրորդին 40, չորրորդին 22, հինգերորդին 11, վեցերորդին 4 : — Սոցա մէջ 27 աշա-

կերտք են նախիջեւանցիք, 13 Թեոդոսիացիք, 11 Թիֆլիզցիք, 11 Ագուլեցիք, 7 Խարասուցիք, 6 Գանձակեցիք, 6 Գրիգորուպոլսեցիք, 5 Ախլցիացիք, 5 Օտեսացիք, 5 Սիմֆերոպոլցիք, 4 Երևանցիք, 3 Պոլսեցիք, 3 Պորուշանցիք, 3 Հնչեշտացիք, 3 Օրպազարցիք, 2 Թայդանցիք, 2 Եւպատորիացիք, 2 Նովոօսիյսքէն, 2 Հին Խրիմեցիք, 2 Նողայսքէն, 2 Միլիբոփոլցիք, 2 Իսմայիլցիք, 2 Միւսուսացիք, 2 Պաղչեսարացիք, 2 Աշտարակեցիք, 1 Բիշնեցի, 1 Կատարինոտարցի, 1 Տրապիզոնցի, 1 Նոր-Ջուղայցի, 1 Շուշեցի, 1 Խարբովացի, 1 Վաղարշապատցի, 1 Չալբըրցի, 1 Որդուպատցի :





Пейзажи В.Т.Томма

ԻԱԼԻՊԵՍԵ ՈՒՍՈՒՄԵԱՐԱՆ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՅ